ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՌԱՁ ԿԱՊԻՏԱԼ ՍՊԸ-ն «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/13» ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
19	malvina	malvina	հեղուկ օճառ ալոե վերայի բույրով	malvina LLC	Ձեռքի հեղուկ կրեմ-օճառ: Հեղուկը պետք է լինի միասեռ, թանձր, մածուցիկ, անթափանց և մարգարտափայլ: Գույնը՝ բաց կանաչ: Մեղմ, թարմ, ալոե վերայի բույրով՝ զերծ մաշկը գրգռող ագրեսիվ լուծիչներից, պարաբեններից և սինթետիկ ներկանյութերից: Անիոնային մակերևութային ակտիվ նյութերի (ԱՄԱՆ) զանգվածային մասը՝10%: Ջրածնային ցուցիչ (pH)՝ 5.5 – 6.5: Դինամիկ մածուցիկությունը 20°C ջերմաստիճանում՝ 1500 ՄՊա·վ (mPa·s), Ապրանքի բաղադրության

						մեջ ներառված է գլիցերին և ալոե վերայի բնական քաղվածք (էքստրակտ)։ Հեղուկ կրեմ-օճառը պետք է լինի հիպոալերգեն, չպարունակի մաշկը գրգռող ագրեսիվ լուծիչներ և քիմիական հավելումներ։ Ապրանքը պետք է մատակարարվի 5 լիտր ծավալով բարձր խտության պոլիէթիլենային (HDPE) ամուր պլաստիկե տարաներով, որոնք պետք է լինեն հերմետիկ փակված՝ նախնական բացումը բացառող պաշտպանիչ հսկիչ օղակով։ Տարան պետք է լինի այնպիսի ամրության, որը կբացառի դեֆորմացիան տեղափոխման, բեռնաթափման և բազմաշերտ պահեստավորման ժամանակ։ Յուրաքանչյուր տարայի վրա պետք է փակցված լինի գործարանային պիտակ, որտեղ հստակ ընթեռնելի կերպով նշված կլինեն արտադրողի անվանումը, ապրանքանիշը, ապրանքի լրիվ բաղադրությունը, արտադրման ամսաթիվը, պիտանիության ժամկետը։ Ապրանքի հիպոալերգեն լինելու փաստը պետք է հավաստվի արտադրողի կողմից տրված որակի

					անձնագրով, կամ լաբորատոր փորձարկումների արձանագրությամբ, կամ ապրանքի գործարանային պիտակի վրա համապատասխան մակնշմամբ: Մատակարարման պահին ապրանքի մնացորդային պիտանիության ժամկետը պետք է կազմի 12 ամիս: Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը: Ապրանքները լինեն չօգտագործված, նոր և որակյալ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ՌԱՉ ԿԱՊԻՏԱԼ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/13» ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
19					